

**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴՆԱ 2020Թ.
ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ) ՓՈՒԼ
8 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տևողությունը՝ 120 րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեստային և գրավոր առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր:

1. Ուվքե՞ր են համարվում նախագորակոչիկներ

ա. 16-ից 18 տարեկան

գ. 12-ից 18 տարեկան

բ. 18-ից 27 տարեկան

դ. 22-ից 40 տարեկան

2. Յուրաքանչյուր պետության գոյության երաշխիքը

ա. ճիշտ քաղաքականությունն է

գ. բանակն է

բ. զինված ուժերն են

դ. զորքերն են

3. ՀՀ գլխավոր շտաբը՝

ա. քաղաքականություն
մշակող մարմին է

գ. զինվորական կառավարման
կենտրոնական մարմին է

բ. պաշտպանող մարմին է

դ. կառավարման մարմին է

4. Արցախի պետական դրոշը ընդունվել է ԼՂՀ գերագույն խորհրդի որոշմամբ

ա. 05.07.1995 թ.

գ. 28.01.1992 թ.

բ. 02.06.1992 թ.

դ. 21.09.1991 թ.

5. Ուվքե՞ր են եղել այսօրվա ՀՀ զինանշանի հեղինակները

ա. Կարո Հալաբյանը և Եղիշե Թադևոսյանը

բ. Ալեքսանդր Թամանյանը և Սարգիս Կոջոյանը

գ. Թորոս Թորոմանյանը և Մարտիրոս Սարյանը

դ. Ռաֆայել Իսրայելյանը և Գևորգ Բաշինջադյանը

6. Թվարկվածներից ո՞րն է բանակի կարևորագույն սկզբունքներից

ա. ժողովրդավարությունը

բ. ժառանգականությունը

գ. միանձնյա ղեկավարումը

դ. իրավունքների խիստ սահմանափակումը

7. Չինվորական ծառայության զորակոչված կամ կամավոր կերպով ծառայության անցած քաղաքացիները համարվում են՝

- ա. զորակոչիկներ
- բ. զինծառայողներ
- գ. զինյալներ
- դ. զինվորականներ

v

8. Գրավոր կամ բանավոր կարգադրությունը՝

- ա. հանձնարարություն է
- բ. հրաման է
- գ. օրենք է
- դ. նորմ է

v

9. Պատերազմող կողմերի ստորաբաժանումների, զորամասերի միջև զինված ընդհարումը՝

- ա. կռիվ է
- բ. գրոհ է
- գ. մարտ է
- դ. հարձակում է

v

10. Համազորային մարտում մտոհրաձգային ստորաբաժանումները կարող են տեղաշարժվել՝

- ա. մարտակարգով
- բ. երթակարգով
- գ. հերթականությամբ
- դ. ստույգ հաջորդականությամբ

v

11. ՀՀ զինված ուժերը կազմված են՝

- զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ պաշտպանության նախարարություն և գլխավոր շտաբ,
- զորամիավորումներից՝ բանակ, բանակային կորպուս,
- զորատեսակներից՝ ցամաքային զորքեր, հրթիռահրետանային, հակաօդային պաշտպանության զորքեր, ռազմաօդային ուժեր,
- զորամասերից՝ դիվիզիա, գունդ:

12. Թվի՛ր, ՀՀ զինված ուժերի համազորային կանոնագրքերը:

ՀՀ ՁՈԻ համազորային կանոնագրքերը չորսն են՝

1. Ներքին ծառայության կանոնագիրք,
2. Կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք,
3. Կարգապահական կանոնագիրք,
4. Շարային կանոնադրություն:

13. Թվի՛ր, զինվորական կոչումները:

շարքային, եֆրեյտոր, կրտսեր սերժանտ, սերժանտ, ավագ սերժանտ, ավագ, ենթասպա, ավագ ենթասպա, լեյտենանտ, ավագ լեյտենանտ, կապիտան, մայոր, փոխգնդապետ, գնդապետ, գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, գեներալ-գնդապետ, բանակի գեներալ

14. Ի՞նչ է հրամանը:

Հրամանը գրավոր կամ բանավոր կարգադրություն է, որը ենթակաների համար սահմանում է որոշակի գործողություններ: Հրամանատարի (պետի) հրամանը ենթակայի համար օրենք է, որը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտությամբ ու նշված ժամկետում:

15. Ի՞նչ է շարքը:

Չինժամայողների, ստորաբաժանումների ու գորամասերի՝ շարային կանոնադրությամբ սահմանված դասավորությունը համատեղ գործողությունների համար՝ հետիոտն և մեքենայով, կոչվում է **շարք**:

16. Ե՞րբ է կիրառվում ծավալուն շարքը, ե՞րբ՝ երթայինը:

Ծավալուն շարքը կիրառվում է ստուգումների, ստուգատեսների, զորահանդեսների, շարային հաշվարկների ժամանակ և անհրաժեշտ այլ դեպքերում:

Երթային շարքը կիրառվում է ստորաբաժանումների շարժման համար և կազմված է շարայուկներից:

17. Մարտի ինչպիսի՞ տեսակներ գիտեք:

Պաշտպանությունը մարտի տեսակ է, որի նպատակն է խափանել կամ հետ մղել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը, նրան պատճառել զգալի կորուստ և ստեղծել նպաստավոր պայմաններ վճռական հարձակման անցնելու համար:

Հարձակումը մարտի հիմնական տեսակն է: Այն վճռական նշանակություն ունի հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար: Միայն վճռական հարձակումով կարելի է հասնել հակառակորդի լրիվ ջախջախման:

18. Անհատական ինչպիսի՞ խրամատներ են լինում:

Անհատական խրամատները լինում են **պառկած, ծնկած կամ կանգնած** դիրքից կրակելու համար:

19. Թվարկի՞ր, անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ:

Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ լիցքավորված չէ՞, արդյոք, զենքը:

Կտրականապես արգելվում է զենքն ուղղել մարդկանց վրա, անկախ այն բանի՝ լիցքավորված է այն, թե՞ ոչ:

Ավտոմատը ոչ լրիվ քանդելու և հավաքելու ժամանակ ապահովել աշակերտների անվտանգ հեռավորությունը 1–2 մ:

20. Թվարկի՞ր, ավտոմատի հիմնական մասերն ու մեխանիզմները

Ավտոմատը բաղկացած է հետևյալ հիմնական մասերից ու մեխանիզմներից՝

- փող՝ փողատուփով, զարկանաձգանային մեխանիզմով և կոթով,
- նշանառության հարմարանք,
- փողատուփի կափարիչ,
- փակաղակի շրջանակ՝ գազամխոցով,
- փակաղակ,
- հետադարձ մեխանիզմ,
- գազախողովակ՝ փողի պահպանակով,
- փողակալ,
- պահեստատուփ,
- սվին-դանակ,
- փողաբերանի արգելակ ԿԱ–74-ի համար:

Ավտոմատի լրակազմի մեջ մտնում են պիտույքները, փուկը և պահեստատուփի պայուսակը: